# ԱՎԱՐԱՅՐԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԻ ՏԵՂԸ

ՀՄԱՅԱԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Սկսած XVIII դ. (առաջին փորձը կատարել են Վենետիկի Մխիթարյանները՝ 1751 թ.) պատմաբանները ձգտում են պարզել Ավարայրի դաշտի տեղը, որտեղ 451 թ. մայիսի 26-ին պատմական ճակատամարտ տեղի ունեցավ հայկական և պարսկական զորքերի միջև։ Այդ ուղղությամբ ձեռնարկված պրպտումները դժվարանում են նրանով, որ պատմիչ և Ավարայրի ճակատամարտի մասնակից Եղիշեի[1] վկայությունները բավարար չեն խնդրո առարկա դաշտավայրի ճիշտ տեղադրությունը որոշելու համար։ Նրա երկում պահպանված տեղեկությունները սահմանափակվում են հետևյալով՝ դաշտավայրը գտնվել է Արտազ գավառում, այնտեղ եղել է Ավարայր գյուղը, որի մերձակայքում ընկած էր Տղմուտ գետով կիսված դաշտը։ V—VI դդ. հեղինակ Ղազար Փարպեցու «Հայոց պատմության» մեջ, որի երկրորդ մասը նվիրված է Ավարայրի ճակատամարտին, կան լրացուցիչ մանրամասներ։ Այսպես, հաղորդելով պարսկական զորքերի շարժման մասին, պատմիչը նշում է, որ նրանք հասան «Գավառն Արտազ, հուպ ի գետն որ կոչի Ավարայր, ի շրջափակ տեղի Տղմուտ դաշտին»[2]։

Ձեռքի տակ ունենալով այդքան աղքատիկ նյութ, պատմաբանները հարկադրված են եղել դիմելու ամենատարբեր մտահանգումների ու ենթադրությունների, որոնք ընկած են Ավարայրի դաշտի տեղադրության վերաբերյալ մի ամբողջ շարք վարկածների ու տեսակետների հիմքում։ 1967 թ. դրանց մեծ մասն ամփոփեց Հ. Աղաբեկյանը՝ առկա պատմական նյութի և հին ժամանակի ռազմական արվեստի տվյալների վերլուծության հիման վրա առաջարկելով Ավարայրի դաշտը տեղադրել Կարազիադինի հարթավայրի մոտ՝ Կոտուր գետի ձախ վտակ Ակ-չայի ափերին[3]։

Հարցի մասին եղած վարկածներից ժամանակագրական առումով վերջինը պատկանում է Թ. Հակոբյանին, Ստ. Մելիք-Բախշյանին և Հ. Բարսեղյանին, որոնք ևս Ավարայրի դաշտը տեղադրում են Կարազիադինի շրջանում[4]։

Վարկածները և, հետևաբար, դրանց հեղինակներին կարելի է բաժանել երկու խմբի, կախված այն բանից, թե նրանք ինչն են դնում Ավարայրի դաշտի տեղադրության հիմքում՝ Մակու գետի ավազանը, թե Ակ-չայի։ Նրանց թվին, ովքեր Ավարայրի դաշտի տեղադրության հիմքում դնում են Մակու գետի ավազանը, պատկանում են Վենետիկի Մխիթարյանները (այդ թվում և Ղ. Ալիշանը), Հ. Մանանդյանը, Հ. Ասատրյանը, Կ. Բասմաջյանը և Ս. Երեմյանը։ Ավարայրի դաշտը Ակ-չայ գետի ավազանում տեղադրելու տեսակետը պաշտպանում են Կ. Կոստանյանցը, Գ. Շիրմազանյանը, Ե. Տեր-Մինասյանը և Հ. Հարությունյանը[5]։

---

1 «Եղիշէի վարդապետի վասն Վարդանայ և Հայոց պատերազմին», Երուսաղեմ, 1865։

2 «Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց և Թուղթ առ Վահան Մամիկոնեան», Վենետիկ, 1833, էջ 217։

3 Г. О. Агабекян, К вопросу о месте Аварайрского сражения («Պատմա-բանասիրական հանդես», 1967, № 4).

4 «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան», հ. I, Երևան, 1986, էջ 353։

5 Հ. Մանանդյան, Հայաստանի գլխավոր ճանապարհները ըստ Պտոլեմեոսյան քարտեզի, Երևան, 1936, էջ 151—156, Հ. Ասատրյան, Պատմություն Հայոց, Բուենոս-Այրես,

Հեղինակների ո՞ր խումբն է իրավացի։ Այդ հարցին պատասխանելու համար հարկ է որոշել պատմական Արտազի սահմանները։ Դրան մեզ դրդում է երկու հանգամանք։ Նախ, այդ երկու ավազանների միջև եղած բավական զգալի հեռավորությունը, որը Ակ-չայ գետի ավազանն Արտազի մեջ մտնելու հարցում լուրջ կասկածներ է հարուցում։ Եվ, երկրորդ, այն բանի հավանականությունը, որ մի քանի հետազոտողներ իրենց վարկածներն ու տեսակետները կառուցելիս ելել են գավառի սահմանների մասին հայտնապես սխալ նախադրյալներից։

Արտազի սահմանները որոշելիս պատմաբանները հենվում են Մովսես Խորենացուց, Անանիա Շիրակացուց, Թովմա Արծրունուց, Վարդան Արևելցուց և ուրիշներից քաղված վկայությունների վրա։ Ըստ Մովսես Խորենացու, Արտազ գավառը գտնվում է «ի հարաւոյ յարևելից կուսէ Մասեաց»[6]։ Արտազի տեղագրության մասին Անանիա Շիրակացու միակ, բայց շատ կարևոր մատնանշումից իմանում ենք, որ այդ գավառը տարածվում էր դեպի Կոգովիտ[7]։ Թովմա Արծրունին պատմելով Արծրունիների տոհմի ներկայացուցիչների միջև հողերի բաժանման մասին, նկատում է, որ Գագիկին անցան Վասպուրականի արևելքում և հյուսիս-արևմուտքում ընկած հողերը։ Արևելյան հողերի թվում նա Արտազը հիշում է Ճոարշ-ռոտ գավառի, Մարդաստանի և այլոց հետ[8]։ Ինչ վերաբերում է Վարդան Արևելցուն, ապա նա տալիս է այդ գավառի առավել հակիրճ տեղագրական նկարագրությունը. «Արտազ Մակու է, ուր կայ սուրբ առաքեալն Թադեոս»[9]։

Իր հոդվածում Հ. Աղաբեկյանը հենվում է միայն Մովսես Խորենացու տեղեկությունների վրա, որոնք, ինչպես հայտնի է, սահմանափակվում են այն մատնանշումով, թե Արտազ գավառն ընկած է Մասիսներից հարավ-արևելք։ Այսպիսով, Արտազն ընկած էր Մասիսներից հարավ-արևելք, Մակու-Զանգիմար գետի ավազանում[10]։ Հյուսիս-արևմուտքում այն սահմանակցում էր Կոգովիտին, հյուսիսում՝ Մասյացոտնին, արևմուտքում՝ Մարդաստանին, արևելքում՝ մերձարաքսյան ցածրավայրին, իսկ հարավ-արևելքում և հարավում՝ Ճոարշ-ռոտ (Ճուարշ-ռոտ) գավառին։

Ինչպես կարելի է դատել վերը բերված թեկուզև աղքատիկ տեղեկություններից, Արտազը, ձգվելով դեպի Մակու-Զանգիմար գետի ավազան, չէր կարող հարավ-արևելյան ուղղությամբ շատ հեռու տարածվել։ Ճոարշ-ռոտն Արտազը Հեր ու Զարևանդ (այժմյան Խոյ) գավառից բաժանում էր բավական ընդարձակ միջանցքով։

Հ. Աղաբեկյանի եզրակացությունից երևում է, որ նա Ավարայրի դաշտն ըստ էության փնտրել է բուն Արտազի սահմաններից դուրս։ Դա, մասնավորապես, երևում է նրա հետևյալ խոսքերից. «...դաշտը պետք է գտնվի կամ Հերի և Զարևանգի հյուսիսային մասում, կամ էլ Ճոարշ-ռոտում, իսկ քանի որ նշված-

---

1947, էջ 137, Կ. Բասմաջյան, Իսկական պատմություն Հայոց, Կ. Պոլիս, 1914—1927, С. Т. Еремян, Народно-освободительная война армян против персов в 450—451 гг. («Вестник древней истории», 1951, № 4, с. 58, пр. 1), Կ. Կոստանյանց, Հյուսվածք, գ. III, Վիեննա, 1887, էջ 119, Գ. Շիրմազանյան, Թե ուր են Ավարայր և Տղմուտ («Արարատ», 1872, № 11, էջ 423—427), «Եղիշեի Վարդանանց պատմությունը», Երևան, 1958, էջ 205, ծան. 118, Հ. Հարությունյան, Վարդանանց պատերազմը, Երևան, 1947, էջ 130—133։

6 Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1913, էջ 179։

7 Անանիա Շիրակացի, Մատենագրություն, Երևան, 1979, էջ 265։

8 Թովմա Արծրունի և Անանուն, Պատմություն Արծրունյաց տան, Երևան, 1978, էջ 240, 256—257, 264։

9 «Աշխարհացոյց Վարդանայ վարդապետի», Փարիզ, 1960, էջ 16։

10 Զանգիմար գետը սկիզբ է առնում Մակուի և Կարա-սուի միախառնումից և թափվում է Արաքս գետը։ Զանգիմարի ձախ ափին՝ նրա միջին հոսանքում, գտնվում է Մակու քաղաքը։

վայրերում միայն մեկ գետ կա՝ Ակ-չայ գետը, հետևաբար և Ավարայրի դաշտը պետք է այստեղ գտնվի»[11]։

Հարց է ծագում, թե Հ. Աղաբեկյանի և նրան համամիտ հեղինակների տեսակետներն ինչպես են համընկնում Ավարայրի ճակատամարտի մասնակից Եղիշեի այն մատնանշմանը (որ հաստատում է Ղազար Փարպեցին), ըստ որի ճակատամարտն Արտազում է տեղի ունեցել։ Ցավոք այդ հարցի պատասխանը միանշանակ չի կարող լինել։ Բանն այն է, որ մենք հաստատ չդիտենք, թե Եղիշեն ու Ղազար Փարպեցին այդ գավառի սահմաններն ինչպես են պատկերացրել։ Միաժամանակ, այդ ուղղությամբ հետագա պրպտումներում պետք է ուշադրությամբ լսել հեղինակների այն խմբի ներկայացուցիչներին, որոնց կարծիքով Ավարայրի դաշտը պետք է փնտրել Մակու-Զանգիմար գետի ավազանում։ Նրանց շարքում պետք է հատուկ առանձնացնել Հ. Մանանդյանին, որը, կարծում ենք, ամբողջությամբ առած ճիշտ է որոշել պարսկական զորքերի շարժման ուղղությունը և Արտազի այն մասը, որտեղ տեղի է ունեցել Ավարայրի ճակատամարտը։ Բերենք նրա խոսքերը. «Պարսկական զորքերը,—գրել է նա,—պետք է եկած լիներ Հեր և Զարևանդից Արտազ Պևտինգերյան քարտեզի այն հին ռազմուղիով, որը սովորական ու բնական ճանապարհն էր տեղաշարժումների համար»։ Ապա նա գրում է. «Վարդանանց պատերազմի տեղը պիտի լիներ Արտազ գավառի այն արևմտյան մասում, որի միջով որոշվում է Պևտինգերյան քարտեզի վերոհիշյալ ճանապարհը»[12]։

Հ. Աղաբեկյանը չի ընդունում Հ. Մանանդյանի այս դատողությունները։ Նրա առարկություններ հիմնականում հանգում են այն բանին, որ «Արտաշատ-Խոյ ճանապարհը Կուջաղի լեռնանցքով Հայկական պարում (Ագրիգաղ)... ամենաերկարն է, դժվարամատչելին և այն ոչ թե դեպի Արտազ է տանում, այլ շրջանցում է նրան արևմուտքից»[13]։ Հ. Աղաբեկյանի այդ խոսքերում դիտարկվում է նրա ձգտումը՝ Արտաշատից գնացող ճանապարհը կապել Կարագիդինի դաշտավայրի հետ, որը նա Ավարայրի դաշտի տեղ է ընդունել։ Անկասկած, դեպի Արտազ այդ ճանապարհը կլիներ երկար, եթե Ավարայրի դաշտը գտնվեր Կարագիդինի մոտ ինչ-որ տեղ։ Իրականում Արտաշատից մինչև Արտազի արևմտյան մասը ճանապարհի երկարությունը մոտավորապես հավասար է Արտաշատից (Արտքս գետի ձախ ափի մոտով, մերձարաքսյան ցածրավայրով) դեպի Կարագիդին՝ Մարդյանի միջով տանող ճանապարհին (մոտ 115 կմ)։

Հ. Մանանդյանի կարծիքը, որ Արտաշատից դեպի Խոյ տանող ճանապարհը (Կուջաղի լեռնանցքով) «հին ռազմուղի» էր, «սովորական ու բնական ճանապարհն էր տեղաշարժումների համար», հաստատվում է նաև VII դ. պատմիչ Սեբեոսի այն տեղեկությունով, ըստ որի պարսից թագավոր Խոսրով Անուշիրվանը «հանդերձ բազմութեամբ սպառազէն կաւրացն և փղանք բազմաւք»[14] Փոքր Ասիա է գնացել Արտազ-Բագրևանդ-Կարին ճանապարհով։ Սեբեոսի այս հաղորդումը շատ էական է Արտազ գավառի արևմտյան մասով ռազմական ճանապարհի առկայությունը հաստատագրելու համար, քանի որ այն դեպի Մակու-Քիլիսքենդ և այնուհետև հին Կոգովիտ տանող միակ ճանապարհն էր։ Սակայն Հ. Մանանդյանի մոտ Արտաշատ-Խոյ ճանապարհի նկարագրության մեջ կան սխալ առաջադրումներ և անճշտություններ, որոնք կարող են շփոթության մեջ գցել։ Ինչպես հայտնի է, Հ. Մանանդյանն այդ ճանապարհի հարավային ուղղությունը դեպի Խոյ ցույց է տալիս Կառեյնիով ու Զուրավով, կարծելով, որ դրանք կազմում էին Արտազի մի մասը։ Ճիշտ եզրակացություն անելով «հին հայկական Արտազ գավառով» ճանապարհի ուղղության մասին, նա, միևնույն ժամանակ, այդ գավառի տեղագրությունը սխալ է մատնանշում[15]։

---

11 Г. О. Агабекян, նշվ. հոդվ., էջ 113։

12 Հ. Մանանդյան. նշվ. աշխ., էջ 181—156։

13 Г. Ѳ. Агабекян, նշվ. հոդվ., էջ 93։

14 «Պատմութիւն Սեբեոսի», Երևան, 1979, էջ 63։

15 Я. О. Манандян, О торговле и городах Армении в связи с мировой тор-

Մենք արդեն նշեցինք, որ ըստ Մովսես Խորենացու, Արտազ գավառը գտնվում էր Մասիսներից հարավ-արևելք։ Նրա պատմական կենտրոնն է Մակուն։ Հազաքից մոտ 20 կմ հարավ ընկած Մակու բնակավայրում գտնվում է ս. Թադեոսի վանքը։ Այդ ճանապարհի Արտաշատ-Խոյ հատվածի ճշտումը, ճանապարհ, որն անցնում էր Մակու-Մարգյան-Կարազիադինով[16], թույլ է տալիս ասելու հետևյալը. նախ՝ բացառել Կարեբնիով և Ջուրավով՝ Արտազ գավառի սահմաններից դուրս, Մարդաստանում գտնվող բնակավայրերով նրա անցնելու հնարավորությունը, և ապա՝ մերժելու Հ. Աղաբեկյանի այն պնդումը, որ այդ ճանապարհն ոչ թե դեպի Արտազ է տանում, այլ նրան արևմուտքից շրջանցում է։

Արտաշատ-Խոյ ճանապարհն Արտազ գավառի արևմտյան մասով ընկած լինելու մասին Հ. Մանանդյանի տեսակետը հիմնավորելու համար հարկ է նաև պարզել հայկական զորքերի ստրատեգիական ու տակտիկական պլանները։ Կուջաղի լեռնանցքով անցնող Արտաշատ-Խոյ ճանապարհի ընտրությունը հայկական զորքերի համար առավել հարմարն էր. դուրս գալով Արտաշատից, նրանք համալրվում էին հարևան ու հարակից գավառների իշխանությունների՝ Խորխոռունիների, Մամիկոնյանների, ինչպես նաև Վանա լճից հարավ և արևելք ընկածների (Մոկաց, Ռշտունի, Արծրունի, Ամատունի և այլոց) աշխարհազորերի հաշվին։ Գավառների ու իշխանությունների տերերին թվարկելիս Եղիշեն նշում է, որ Արտաշատում հավաքված իշխանները «եկեալ հասանէին իւրաքանչիւր զօրօք և ամենայն պատրաստութեամբ, նոքա և որ բունքն հաստատուն կացեալ էին ի տեղւոջն»[17] (ապա հետևում է իշխանական տների ներկայացուցիչների անվանացանկը)։ Մեր կարծիքով վերջին դարձվածի («նոքա և որ բունքն հաստատուն կացեալ էին ի տեղւոջն») աշխարհաբար թարգմանությունը («նրանք և ովքեր ի բնե հաստատ էին մնացել իրենց տեղում»)[18], այնքան էլ հաջող չէ։ Կասկած չկա, որ այստեղ խոսքն Արտաշատից Արտազ տանող ճանապարհին ընկած կամ վերջինին համեմատաբար մոտ գտնվող իշխանությունների մասին է։ Այդ դարձվածը կարելի էր թարգմանել այսպես. «և՛ նրանք (այսինքն Արտաշատից դուրս եկածները—Հ. Մ.), և՛ նրանք, ովքեր մշտապես բնակվում էին այդ վայրերում»։

Այդ ճանապարհի ընտրությունը համապատասխանում էր նաև հայկական զորքերի գլխավոր նպատակին։ Ինչպես հայտնի է, հրամանատարությունն իրեն հաշիվ էր տալիս, որ գործ ունի հզորագույն արևելյան տերության բանակի հետ, որի կազմում էին նաև մահապարտների ջոկատներն ու մարտական փղերը։ Այդ իսկ պատճառով նրա առաջնահերթ խնդիրն էր պարսկական բանակին առաջին ճակատամարտում շոշափելի կորուստներ պատճառելը, իսկ այնուհետև պատերազմը պարտիզանական մեթոդներով շարունակելը, որպեսզի հետագա մանր բախումների ու մարտերի ժամանակ թշնամուն հյուծի և արյունաքամ անի։ Այդ առումով հարկ է կարծել, որ իբրև հավաքի և, ամենայն հավանականությամբ, ճակատամարտի տեղ է ընտրվել Արտազի «շրջափակ տեղին»[19], որի թիկունքում Կոգովիտի լեռնային զանգվածն էր, որտեղ կարելի էր նահանջել՝ պարտիզանական կռիվներ մղելու համար։

Ինչպես երևում է Եղիշեի վկայություններից, Արտազն այդ նպատակների համար նախօրոք էր ընտրվել։ Պատմիչն այդ առթիվ նշում է. «Սոքա ամենեքեան համագունդք հասանէին ի գործ պատերազմին ի դաշտն Արտազու, և լի-

---

говлей древних времен, Ереван, 1954, с. 295, նույնի՝ Հայաստանի գլխավոր ճանապարհները ըստ Պտոլոմեոսյան քարտեզի, էջ 155։

16 Հ. Հ. Մարտիրոսյան, Այաս-Թավրիզ առևտրական մայրուղու Բագավան-Խոյ հատվածը (XIII—XV դդ.), («Պատմա-բանասիրական հանդես», 1955, № 2, էջ 131—132)։

17 Եղիշե, էջ 186։

18 «Եղիշեի Վարդանանց պատմությունը», Երևան, 1958, էջ 91։

19 Ղազար Փարպեցի, էջ 217։

ներ հանդես համարուն վաթսուն և վեց հազար այր ընդ հեծեալ և ընդ հետեւակ»[20], «Հասանեին» (այսինքն «հասնում էին») բառը հուշում է այն միտքը, որ Արտազը հայկական զորքերի հավաքի և կենտրոնացման նախօրոք համաձայնեցված տեղն էր։ Չէ՞ որ նրանք կարող էին Արտազին մոտենալ նաև Վանա լճի կողմից։

Ուշագրավ է նաև այն, որ թե՛ հայկական և թե պարսկական զորքերը ստրատեգիական կարևոր դիրքեր գրավեցին։ Հայկական զորքերը դիրքեր գրավեցին՝ մեկը Մակու շհասած, իսկ մյուսը՝ դեպի Կարեյնի տանող ճանապարհների խաչաձևման կետը, իսկ պարսկական զորքերը՝ Հերում և Զարևանդում այդ ճանապարհների միացման մոտակայքում։ Դրանով իսկ, կողմերից յուրաքանչյուրն ապահովում էր իր ճամբարի մատույցների վերահսկողությունը։

Այդ երկու ճամբարների միջև հեռավորությունը 180 կմ էր։ Այն, որ հայկական և պարսկական զորքերը միմյանցից այդքան մեծ հեռավորության վրա էին կենտրոնացել, երևում է Եղիշեի վկայություններից։ Հաղորդելով պարսկական զորքերի՝ Հեր և Զարևանդ հասնելու մասին, պատմիչն ընդգծում է, որ շուտով նրանցից «գունդ բաղում հատանէր ի զօրաց նորա, ասպատակաւ արշաւէր, յաւարի առնուլ կամէր զգաւառս բազումս»[21]։ Սրանից հետևում է, որ հայկական և պարսկական ճամբարների միջև ձգվում էր բավական ընդարձակ տարածք։ Անկասկած է, որ այդ բազմաթիվ գավառները գտնվում էին պատմական Վասպուրականի արևելյան և հարավ-արևելյան մասերում։

Ստեղծված իրավիճակում կողմերից որևէ մեկը պետք է իր վրա վերցներ նախաձեռնությունը և մերձենար հակառակորդին։ Դա արեց պարսկական բանակը։ Ամեն ինչից երևում է, որ պարսկական բանակը երթ-ցատկ կատարեց դեպի Արտազ, երբ հայտնաբերեց հայկական զորքերի առկայությունն այնտեղ։ Պարսկական զորքերի շարժման մասին հաղորդում է Ղազար Փարպեցին։ Ըստ նրա, Վարդան Մամիկոնյանի ուղարկած հետախույզները վերադառնալով հաղորդեցին, որ պարսիկները շուտով կարող են հասնել «միջնաշխարհը»[22]։ Ամենայն հավանականությամբ «միջնաշխարհ» ասելով այստեղ նկատի է առնվել պատմական Վասպուրականը[23], որի մեջ էր մտնում նաև Արտազը։ Ղազար Փարպեցու խոսքերից կարելի է եզրակացնել, թե Վարդան Մամիկոնյանի շրջապատից ինչ-որ մեկը ենթադրում էր («ասէին») շարժվել դեպի Հեր ու Զարևանդ և այնտեղ վճռել «ելք գործոյն պատերազմին», «կամէին փութալ, սակայն ևս առաւել ստիպով եկեալ հասանէին գունդն Պարսից ի գաւառն Արտազ...»[24]։ Սրանից կարելի է եզրակացնել, որ հայկական բանակը մնում էր իր հին տեղում, այսինքն Արտազի արևմտյան մասում, որտեղ դիմում էին պարսկական զորքերը։

Հերից ու Զարևանդից մինչև Քիլիսքենդ, ինչպես նշվեց, 180 կմ է։ Պարսկական բանակն այդ տարածությունն օրական 30 կմ երթ կատարելով և հանգրստի համար կայանելով կարող էր անցնել 6—7 օրում։ Հաշվենք հայկական ու պարսկական զորքերի շարժման ժամանակն ամբողջությամբ առած։ Հայերը պարսկական զորքերի Հեր ու Զարևանդ մտնելու մասին իմացան մոտ ապրիլի 25-ին, Արտաշատում զորահավաքի համար ծախսվեց 10 օր և հայկական զորքերը կարող էին քաղաքից դուրս գալ մոտավորապես մայիսի 5-ին։ 115 կմ

---

20 Եղիշէ, էջ 137—138։

21 Նույն տեղում, էջ 199։

22 Ղազար Փարպեցի, էջ 216։

23 Պատմաբանների, մասնավորապես Ս. Երեմյանի կարծիքով, Վասպուրականի հետ միասին «միջնաշխարհ» մեջ են մտել նաև Այրարատը, Տայքը, Սյունիքը, Մոկքը, Տուրուբերանը, Սոփքը և Բարձր Հայքը (Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, Երևան, 1963, էջ 71)։ Տվյալ դեպքում Վասպուրականը զուգորդվում է «միջնաշխարհի» հետ, քանի որ այն հարավ-արևելքից նրա առաջին մարզն էր, որտեղից Արտազ էին գնում պարսկական զորքերը։

24 Ղազար Փարպեցի, էջ 216—217։

երկարությամբ ճանապարհը նրանք հաղթահարեցին, հաշվի առնելով երթի ժամանակ նրանց միացող զորքերին հանդիպելու համար հատկացված կանգառները, 5—6 օրում։ Այսպիսով, նրանք Արտաղի արևմտյան կողմում հայտնվեցին մայիսի 11—12-ի մոտերքը։ Հետագա մի քանի օրվա ընթացքում այնտեղ «հասանէին» մյուս իշխանությունների զորքերը։ Պարսիկները կարող էին Արտաղում հայկական զորքերի հայտնվելու մասին իմանալ մայիսի 15—16-ին։ Զորահավաքին 2—3 օր հատկացնելով, պարսկական բանակը Հերից ու Զարևանդից կարող էր Արտազ հասնել 6—7 օրում։

Մեր այս հաշվարկները համընկնում են Հ. Աղաբեկյանի կատարածներին։ «Պարսկական զորքերը,—գրում է նա,—հարկ չունեին գնալու 300 կմ երկարություն ունեցող երթուղով և նրանք ավելի կարճ ճանապարհ ընտրեցին։ Եվ ահա, դուրս է գալիս, որ չնայած պարսկական ու հայկական զորքերը թափով ընթանում էին մեկը մյուսին ընդառաջ (ինչի մասին վկայում է Փարպեցին), այնուամենայնիվ, 165 կմ հեռավորությունը (Արտաշատ-Խոյ՝ Մարգյանով) նրանք հաղթահարեցին 30 օրում, այսինքն այդ ընթացքում կողմերից յուրաքանչյուրը միջին հաշվով անցավ 80—85 կմ, կամ օրական 3 կմ։ Բայց այդպես չի լինում»[25]։ Իսկապես, այդպես չէր։ Ինչպես արդեն նշվեց, հայկական զորքերը Կուջաղի լեռնանցքով անցնող ճանապարհով կտրեցին 115 կմ, իսկ պարսկական բանակը՝ Կարաղիադին-Մարգյան-Մակուով՝ 180 կմ։ Հայկական զորքերը կանգ առան Արտազի արևմտյան մասում։ Իսկ պարսկական բանակը կարճ ճանապարհ չընտրեց, այլ սպասելով Հերում ու Զարևանդում, որպեսզի ճշտի, թե որտեղից կհայտնվեն և որտեղ կսկսեն կենտրոնանալ հայկական զորքերը, շարժվեց դեպի Արտազի արևմտյան մասը։ Հասնելով այնտեղ, պարսկական զորքերը, Ղազար Փարպեցու խոսքերով ասած, բանակեցին «ի շրջափակ տեղի... զոր ընտրեաց յաղագս երկիւղի զօրացն Հայոց»[26]։ Պատմիչի խոսքերից կարել է եզրակացնել, որ հայկական զորքերն ինչ-որ տեղ մոտակայքում էին։ 451 թ. մայիսի 25-ին, այնուհետև հաղորդում է Ղազար Փարպեցին, հայկական զորքերը մոտեցան այդ տեղին և ճամբար դրեցին[27]։ Ինչպես երևում է, նրանք թողել էին իրենց նախկին դիրքերը։

Հաջորդ օրը՝ մայիսի 26-ին, տեղի ունեցավ Ավարայրի ճակատամարտը։

Այսպիսով, մեր ձեռքի տակ եղած փաստերի վերլուծությունը ցույց է տալիս, որ Ավարայրի ճակատամարտի նախօրյակին հայկական և պարսկական զորքերի շարժման ու մերձեցման հետ կապված իրադարձությունները ծավալվում էին՝ կապված Արտաշատ-Խոյ ճանապարհի հետ, Կուջաղի լեռնանցքով, իսկ ճակատամարտը տեղի է ունեցել այս ճանապարհի՝ Արտազի արևմտյան կողմում ընկած հատվածում։

Արտազ գավառի այդ մասում Ավարայրի դաշտը փնտրելու փորձեր արվել են նաև առաջ։ Ուշագրավ է, որ այդ ուղղությամբ առաջին քայլն արվել է Վենետիկի Մխիթարյանների կողմից՝ դեռ 1829 թ. և մոտ է եղել նպատակին[28]։ Նրանք առաջարկում էին Ավարայրի դաշտը տեղադրել Զեյվա բնակավայրի շրջանում՝ Մակու գետի վտակ Կգլար-չայը նույնացնելով Տղմուտ գետի հետ։ Սակայն Զեյվա բնակավայրը հազիվ թե այդ ժամանակ մտներ Արտազի կազմի մեջ։ Այն, ավելի շուտ, գտնվել է Մարդաստանի հյուսիսում՝ Արտազի սահմանից ոչ հեռու։

Նպատակին ավելի մոտ են եղել «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանը» կազմողները։ Ճիշտ է, համեմատելով, ինչպես արդեն նշվեց, այժմ տիրապետող կարծիքի հետ, նրանք Ավարայրի դաշտը մատնանշում են Կարազիադինի շրջանում, բայց, միևնույն ժամանակ, իրենց աշխատության այլ էջերում վկայակոչում են ինչ-որ մեկի (հնարավոր է իրենց)

---

25 Г. О. Агабекян, նշվ. հոդվ., էջ 105։

26 Ղազար Փարպեցի, էջ 217։

27 Նույն տեղում։

28 Նկատի ունենք այդ թվականին հրատարակված քարտեզը։

ենթադրությունը, համաձայն որի, այդ դաշտն ընկած է Արտազ գավառի մահալներից մեկում՝ Ավաջիքում[29] (պետք է լինի Օվաջիք), իսկ Տղմուտ գետը հանդիսանում է նրա տարածքով հոսող Ակ-չայ գետը[30] (նույնանուն է Կոտուր գետի ձախ վտակի հետ)։ Տեղանքը, որով ընթանում է ճանապարհի այդ հատվածը, կոչվում է Օվաջիք, որ թուրքերեն նշանակում է «դաշտավայր»։ Վարչական առումով Օվաջիքը մահալ է, որը մտնում է Մակուի մարզի (հին Արտազ) մեջ։ Նրա երկարությունը մոտ 24 կմ է, իսկ լայնությունը՝ 12 կմ։ Մահալի կենտրոնը Քիլիսքենդ (եկեղեցական գյուղ) բնակավայրն է, որն իր անունը ստացել է, ինչպես ենթադրում են հետազոտողները V—VII դդ. կառուցված հայկական եկեղեցուց։ Նրա ավերակները մինչև այսօր պահպանվել են[31]։

Քիլիսքենդը, ինչպես նշվեց, գտնվում է Արտաշատ-Մակու ճանապարհի վրա։ Օվաջիքը շրջապատված է լեռներով, որոնք հատկապես բարձր են նրա հյուսիս-արևմտյան մասում։ Հյուսիսում Սարիչիչեկ և Սարիչամակ լեռնաշղթաներով այժմ անցնում է թուրք-պարսկական սահմանը։

Օվաջիքով հոսում են երկու գետ՝ Կարա-սու (Սև գետ) և Ակ-չայ (Սպիտակ գետ)։ Կարա-սուն մահալը կտրում է հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք ուղղությամբ։ Այն թափվում է Մակու գետը։ Ակ-չայը սկիզբ առնելով արևմուտքում ընկած ձյունապատ գագաթներից, խմելու ջրի աղբյուր է ծառայում տեղի բնակչության համար։ Այն չափերով համեմատաբար փոքր է։

Մենք կարծում ենք, որ Կարա-սուն հենց Տղմուտ գետն է։ Այն սկիզբ է առնում ճահիճներից և հոսում ճահճոտ տեղանքով։ Նրա ջուրը խմելու համար պիտանի չէ։ Կարա-սուն Արաքսի, Զանգիմարի և Սարի-սուի հետ միասին Մակուի մարզի չորս հիմնական գետերից մեկն է։ Այստեղ, Կարա-սու գետի ափերին կից ինչ-որ վայրում էլ պետք է ընկած լինի Ավարայրի ճակատամարտի տեղը։ Այժմյան Քիլիսքենդը պատմական Ավարայր գյուղն է, իսկ Օվաջիքը՝ «դաշտն Արտազու»։

## МЕСТО АВАРАЙРСКОГО СРАЖЕНИЯ

АМАЯК МАРТИРОСЯН

### Резюме

Среди ученых-арменоведов существует ряд версий о местоположении Аварайрской равнины, где 26 мая 451 г. произошло историческое Аварайрское сражение между армянскими и персидскими войсками. Эти версии условно можно подразделить на две группы, в зависимости от того, в каком из бассейнов—бассейне реки Маку или бассейне реки Ак-чай (левый приток реки Котур) локализуют их авторы гавар (область) Артаз. Мы отдаем предпочтение точке зрения сторонников первой группы и приходим к заключению, что Аварайрская равнина, а, следовательно, и бранное поле Аварайра находились у дороги, ведущей через Маку в исторический Коговит и оттуда в Арташат (отрезок древнего военного пути Хой-Арташат). Эта часть Артаза, ныне носящая название Оваджик, составляет один из округов области Маку. Она примыкает на северо-западе к горным хребтам, по которым ныне проходит ирано-турецкая граница. Протекающая по ней река Кара-су берет начало с болот гор на северо-западе и впадает в реку Маку. Оваджик, что в переводе с тюркского означает «равнина», есть не что иное, как «равнина Артаза» (Егише), а река Кара-су («Черная река»)—река Тхмут (от армянского «ил», «тина»).

---

29 «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան» հ. I, էջ 359։

30 Նույն տեղում, էջ 187։

31 Հավանական է, որ այդ եկեղեցին կառուցվել է ի հիշատակ Ավարայրի ճակատամարտի։